

ԱՆՈՒՇ ԵԴՈՅԱՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ՂԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՈԼՈՎԱՆ
ՂԱՍԱԿԱՆ ԴՈՒՄԸ

Ղերանուններին ձևաբանական տեսակետից հատուկ է հոլովի քերականական կարգը: Հայտնի է, որ այդ կատեգորիան հատուկ է նաև գոյականների: Եթե գոյական խոսքի մաստային կարգի մեջ մտնող բոլոր բառերին բնորոշ են որոշակի քերականական հատկանիշներ (հոլով, թիվ, առում), ապա ղերանունների քերականական հատկանիշները խիստ անմիօրինակ են: Դա երևում է հատկապես՝ ղերանունների հոլովման համակարգը քննելիս: Նախ հայերենի ոչ բոլոր ղերանուններն են հոլովվում:

Չի ուղմվոո ղեոանուններն են՝ *ինքս, ինքդ, այս, այդ, այն, այսպես, այդպես, այնպես, նույնպես, համայն, ամենայն, որևէ, որևիցե, երբևէ, երբևիցե, ոմն, ինչ-ինչ, ինչ-որ, որոշ, մի շարք, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ուր:* Հայերենի հոլովվող ղերանուններն էլ հոլովական հատկանիշների տեսակետից բաժանվում են երկու մասի: Նրանց մի մասը հոլովվում է գոյականի պես և մտնում է անվանական հոլովման մեջ, իսկ մյուս մասը հոլովում է ղերանվանական հոլովումով:

Ղեոանվանական հոլովմանն են պատկանում անձնական (*ես, դու, նա, մենք, դուք, նրանք*), ցուցական (*սա, դա, նա*), փոխադարձ (*իրար*), հարցական – հարաբերական (*ով*) ղերանունները:

Անվանական հոլովումով հոլովվում է ղերանունների մեծ մասը: Սրանց մի զգալի մասը հոլովվում է *ի* հոլովումով, մի քանիսը *ց* հոլովումով, մեկը՝ *ու* հոլովումով:

Ինչպես հայտնի է, անվանական հոլովման ժամանակ էական դեր է հատկացվում հոլովիչներին, որոնք լինում են արտաքին (*ի, ու, ան, ոք, վա, ց*) և ներքին (*ա, ո*) թեքման:

Սինչև ղերանունների հոլովման համակարգի դասավանդմանն անցնելը՝ հարկավոր է դիմել գոյականների հոլովման համակարգի բննարկմանը, որի կրկնությունը սովորողներին հնարավորություն կտա ոչ միայն վերհիշել

անվանական հոլովման նրբությունները, այլև դերանվանական հոլովումն անցնելիս հնարավոր կլինի այն համեմատել անվանական հոլովման հետ: Այս նպատակով ուսուցիչը գրատախտակի մի կողմում գրել է տալիս գոյականների հոլոված ձևերը:

Մյուս մասում ուսուցիչը գրում է *ես* անձնական դերանվան հոլովածները: Ապա առաջարկում է նայել գոյականների և անձնական *ես* դերանվան սեռական հոլովների կազմությանը և որոշել տարբերությունը: Ուսուցչի օգնությամբ պարզվում է, որ գոյականի սեռականը կազմվում է հոլովակազմիչների միջոցով, իսկ անձնական դերանունը սեռական հոլովում լրիվ փոխվում է, նոր հիմք է ստանում: Այնուհետև աշակերտների ուժերով ձևակերպվում է սրանից բխող եզրակացությունը՝ անձնական դերանվան հոլովման ժամանակ հանդես է գալիս արմատապես փոփոխված նոր հիմք. հոլովման աս տեսակը դերանվանական հոլովում է: Հոլովման նույն սկզբունքով գրատախտակին հոլովվում են *դու, մենք, դուք* անձնական դերանունները:

Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների սեռականը (*իմ, քո, մեր, ձեր*) նույնպես չի կազմվում ուղղականից (*ես, դու, մենք, դուք*): Երեխաները համոզվում են, որ ուղղականի ձևը այլևս ոչ մի հոլովում հանդես չի գալիս: Այնուհետև ուսուցիչը ցույց է տալիս այս դերանունների տրական հոլովի կազմության եղանակը, ասելով, որ այս դերանունների տրական հոլովածը (*իմձ, քեզ, մեզ, ձեզ*) նույնպես նոր ձև է. այն չի կազմվում նախորդ հոլովներից որևէ վերջավորության միջոցով: Քանի որ այս ձևերից յուրաքանչյուրը մյուսից տարբեր է իր հիմքով, հասկանալի է, որ այստեղ հիմքի և վերջավորության մասին խոսք լինել չի կարող: Գրված անձնական դերանունների կողքին ուսուցիչը գրում է III դեմքի անձնական *նա* և *ինքը* դերանունների հոլովական ձևերը:

Ցույց տալով տրական և սեռական հոլովների հիմքի սմանությունը՝ ուսուցիչն ասում է, որ ի տարբերություն առաջին և երկրորդ դեմքերի, երրորդ դեմքի *նա* և *ինքը* դերանունների տրականը կազմվում է մի դեպքում սեռականից (*նրա*)-ն-ի հավելումով, իսկ մյուս դեպքում *ինքը* դերանվան տրականը (*իրեն*) կազմվում է սեռականի վրա գրաբարածև *-եան* հոլովակերտի միջոցով, որը վերածվել է *են*-ի (*իրեն*):

Այժմ ուսուցչի խնդիրն է սովորողներին ծանոթացնել անձնական դերանունների հայցական հոլովի հետ: Այստեղ ուսուցիչը նորից դիմում է գոյականների հոլովման համակարգի քննությանը և հիշեցնում, որ անվանական հոլովման ժամանակ գոյականը որոշյալ առումով գործածվելիս կարող է

նման լինել ուղղականին (իրի առում), կամ տրականին(անձի առում):Յուշող այդ տեղեկությունը տալուց հետո՝ հարցով դիմում է դասարանին՝ «Ինչու՞ է անձնական դերանունների հոլովման ժամանակ հայցական հոլովը միշտ նմանվում տրականին, իսկ անվանական հոլովման ժամանակ՝ ոչ բոլոր դեպքերում է այդպես»:

Ուսուցչի օգնությամբ ձևակերպվում է սրանից բխող եզրակացությունը՝ անձնական դերանունների հայցականը միշտ նմանվում է տրականին, քանի որ սրանք իմաստային տեսակետից միայն անձ են մատնացույց անում: Գրատախտակին գրում է երեխաների կազմած մի նախադասություն, որտեղ անձնական դերանունը կիրառվել է հայցական հոլովով: Օրինակ՝ Գիշերային այդ թանձր խավարում ես հազիվ նկատեցի *քեզ*:

Լյժմ, ուսուցչին մնում է բացատրել անձնական դերանունների բացառական, գործիական և ներգոյական հոլովաձևերի կազմությունը: Գրատախտակին գրում է *ես* անձնական դերանվան տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովական ձևերը:

Ուսուցիչը երեխաների ուշադրությունը դարձնում է այդ դերանվան նշված հոլովաձևերի կազմությանը, ասելով, որ սրանց բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են տրականից *-ից, -ով, -ում* անվանական հոլովման վերջավորություններով և ունեն զուգահեռ հիմքեր:

Վերջում աշակերտների ուժերով կազմվում ու գրատախտակին գրվում է անձնական դերանունների հոլովման գծապատկերը:

Եթե ամփոփենք անձնական դերանվան հոլովման յուրահատկությունների դասավանդումը, կարող ենք ասել, որ *ես, ինքս, դու, ինքք, նա, ինքը, մենք, ինքներս* դերանուններն ունեն դերանվանական հոլովում, իսկ *նրանք, իրենք* դերանունները՝ անվանական:

Դերանվան հոլովման առանձնահատկությունների յուրացումն ունի ոչ միայն քերականական, այլև ոճական արժեք. ճանաչելով այդ յուրահատկությունները՝ աշակերտները կարող են դրանք խոսքի մեջ ճիշտ կիրառել և զերծ մնալ սխալներից:

Դերանվանական հոլովման ուսուցումը հանրակրթական դպրոցի միջին օղակում կարևորվում է նրանով, որ միջին տարիքի դպրոցականի մոտ հենց այս շրջանում է , որ սկսում են ձևավորվել գրագետ, ինքնուրույն խոսք կառուցելու ընդունակությունները:

Շատ հաճախ աշակերտները լավ չեն յուրացնում դերանունների դերանվանական հոլովմամբ թեքված հոլովական ձևերը: Իսկ երբեմն էլ դրանք շփոթում են մեկը մյուսի հետ: Օրինակ գրավոր աշխատանքների մեջ հաճախ ենք հանդիպում *նա և իր, նրանց և իրենց* անծնական դերանունների թեքված ձևերի շփոթությանը: Հաճախ *իրեն* ձևի փոխարեն գրում են *իրան* սխալ ձևը, իսկ *իր* ձևի փոխարեն օգտագործում են *իրեն* ձևը: Օրինակ, գրում են *իրեն տունը, իրեն մոտ, փոխանակ՝ իր տունը, իր մոտ* և այլն:

Այս կարգի սխալներն ուղղելու նպատակով հարկավոր է ընտրողական թելադրություններ տալ:

Գրավոր խոսքում քիչ չեն դերանվանական հոլովման ենթարկված դերանունների սեռական-տրականի շփոթության դեպքերը: Այդ հոլովածները կապերի հետ գործածելիս պարագայական նշանակություն ունեցողները փոխանակ դրվեն տրական հոլովածի հետ, դրվում են սեռականների հետ: Օրինակ, *իմ մոտ, քեզ հետ, քեզ համար* դերանուն + կապ կաղապարենրն օգտագործելու փոխարեն հանդիպում ենք *իմ մոտ, քո մոտ իմ համար* սխալ գործածված հոլովական ձևերի:

Ուստի, մանատիպ սխալներից խուսափելու և երեխաների գրագետ խոսքը զարգացնելու նպատակով՝ դերանուն թեմայի ուսուցման մեջ դերանվանական հոլովման դասավանդումը առաջնային և կարևոր խնդիր պետք է համարել: Հիշյալ ձևերի շուրջը հաճախ հարկավոր է հանձնարարել ստուգողական թելադրություններ և շարադրություններ: Պետք է համոզվել, որ այս նյութը լիովին յուրացված է աշակերտների կողմից, եթե կան թերություններ, ընթացքում անընդհատ անդրադառնալ դրանց կրկնությանն ու քննարկմանը, մինչև ուսուցիչը կհամոզվի, որ աշակերտները յուրացրել են դերանվանական հոլովման բոլոր նրբությունները:

Օգտագործված գրականություն

1. Ս.Աբեղյան, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931թ:
2. Ս.Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906թ:
3. А.М.Пешковский, Русский синтаксис в научном освещении, 1938г.
4. Ս.Արրահամյան, Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956թ:
5. Ա.Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ հայերեն լեզուի, Վիեննա, 1866թ:
6. Գ.Ավետիքյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1829թ:
7. Ա.Ղարիբյան, Հայոց լեզվի քերականության դասագիրք, V և VI դասարանների համար, Երևան, 1935թ: